Ս. ԲԱՂԻՐՅԱՆ

ՀՈՒԾԵՐ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԱՍԻՆ

(1902—1906 թ. թ.)

ազար ինը հարյուր երկու թվականին ես նոր էի ընդունվել էջմիածնի Գևորգյան Ճեմարանը։

Ըստ սովորության, բոլոր նոր ընդունվածները պետք է ենթարկվեին նաև ձայնափորձության՝ երգեցիկ խմբի մեջ ընդունվելու համար։

Պետք է ասել, որ Ճեմարան ընդունվելը այնքան էլ հեշտ չէր այն ժամանակ. ամեն կողմից, թե՛ Ռուսաստանից (Կովկասից) և թե՛ արտասահմանից գալիս էին հայ պատանիներ Ճեմարանում սովորելու համար։ Բնական է, որ դիմողների թիվը մի քանի անգամ ավելի էր լինում ամեն տարի, քան ընդունվածների թիվը։ Ձայնավորներին գերադասություն էին տալիս քննության ժամանակ այն հասկանալի պատճառով, որ Ճեմարանը ավարտողները կա՛մ հոգևորականներ էին դառնում կա՛մ ուսուցիչ-մանկավարժներ հայկական դպրոցների համար։ Երկու դեպքումն էլ անհրաժեշտ էր երաժշտական կրթությունը, հատկապես երգեցողության ուսմունքը, որը դրված էր Ճեմարանում շատ լուրջ հիմքերի վրա, մանավանդ Կոմիտաս վարդապետի օրով։ Բացի հայկական և եվրոպական ձայնանիշներով երաժշտության դասերից՝ Ճեմարանը ուներ քառաձայն երգեցիկ խումբ, որը ելույթներ էր ունենում տոնական հանդեսների ժամանակ թե՛ Ճեմարանում և թե՛ էջմիածնի Մայր Տաճարում։

Ահա այդ խմբի մեջ ընդունվելու համար Ճեմարանի հանդիսասրահում նշանակված էր նորեկների ձայնափորձը։ Ճեմարանի երկրորդ հարկի միջանցքում, հանդեսների դահլիճի մուտքի առաջ հավաքվել էին մոտ երեսուն հոգի նոր ընդունվածներ, որոնց մեկ-մեկ ներս էին կանչում ձայնը փորձելու համար։

Հերթը հասավ ինձ, ներս մտա։ Դաշնամուրի առաջ նստած էր Կոմիտաս վարդապետը, իսկ մի քիչ հեռու, ցուցակը ձեռքին կանգնած էր վերակացու Հ. Գրիգորյանը։

— Ո՞րտեղացի ես,— հարցրեց Կոմիտաս վարդապետը։

— Ջանգելուրցի, Խնձորեսկ գյուղացի,— համարձակ պատասխանեցի ես։

— Ապրես։ Երգել գիտե՞ս։

— Այո՛, հայր սուրբ, գիտեմ։

— Հապա մի երգիր տեսնեմ. որը լավ գիտես՝ այն երգիր։

— «Ձայն տուր, ո՛վ ծովակ»-ը երգեմ։

— Երգի՛ր, երգի՛ր։

Ու երգեցի այնպես, ինչպես սովորել էի գյուղում պատահական երդողներից, հարսանիքների կամ խնջույքների ժամանակ։ Երգելուց հետո անհամբեր սպասում էի իմ «հաղթական» ընդունելությանը։ Բայց Կոմիտաս վարդապետը մի պահ ուղիղ հայացքով դիտելով ինձ, մի երկար «հը՛մ» արեց, ապա հարցրեց.

— Գյուղում շա՞տ ես երգել։

— Այո, հայր սուրբ,— ավելի ընկճված տրամադրությամբ պատասխանեցի ես։

— Ձայնդ փչացրել ես, երևի ղուռնաչիների հետ ես երգել։

— Այո, հարսանիքներում։

— Եվ գինի, օղի էլ խմել չէ՞ս։ Ա՛յ դու ղուռնաչի։ Հիմա գնա՛, մի ուրիշ անգամ կկանչեմ։— Ու ավելացրեց.— Երկու շաբաթ ոչ պանիր, ոչ ընկույզ, ոչ էլ թթու-կծու բաներ չուտես և ոչ էլ բաց օդում երգես, հասկացա՞ր, դե գնա՛։

Ինչպես ասում են՝ «խորտակված» հույսերով դուրս եկա դահլիճից ու միացա երգեցիկ խմբի մեջ չընդունվածների խմբին։ Իսկ ընդունվածները մնացին դահլիճում ձայնավարժությունների համար։

Պետք է ասել, որ երգեցիկ խմբի անդամ լինելը մեծ պարծանք էր Ճեմարանի ուսանողի համար, որովհետև երգիչը հատուկ պատիվ ու հարգանք ուներ շրջապատում և վայելում էր Ճեմարանի վարչության համակրանքը։ Երգիչները դասվում էին Կոմիտաս վարդապետի հատուկ հոգածության ներքո։

վարդապետը հարցրել է իմ մասին և պատվիրել, որ միասին գնանք իրեն մոտ։

Շաբաթ օր էր։ Երեկոյան ժամերգությունից հետո, աշնան արևամուտի շողերը դեռ դուրգուրում էին Կոմիտաս վարդապետի պարտեզի բազմերանգ ծաղիկներն ու ծառերը։ Նա նստած պարտեզում՝ իր ձեռքով շինած տաղավարի մուտքի մոտ դրած գրասեղանի առաջ գրում էր, երբ ես և Սուրենը ակնածանքով ներս մտանք պարտեզը և կանգ առանք մի տասը քայլ հեռավորության վրա։

— Հը՛, զուռնաչինե՛ր, եկե՛լ եք,— նկա-

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Անցավ մոտ մի ամիս։ Երգեցիկ խմբի ամեն անդամվա հավաքույթը խորը հուզում էր իմ սիրտը և պատանեկան մտորումներով փոթորկում իմ հոգին։

Մի օր էլ իմ դասընկերներից Սուրեն Տեր-Գրիգորյանը հայտնեց ինձ, որ Կոմիտաս

տնելով մեզ, ասաց նա։— Եկեք նստեք, հիմա ես կվերջացնեմ։

Երկար չսպասեցինք։ Վերջացնելով աշխատանքը, Կոմիտաս վարդապետը դարձավ մեզ և հարցրեց.

— Էն ո՞վ էր երեկ գիշեր երգում Լճի ափին։ Ջուռնաչիներ, չե՞մ ասել, թե բաց օդում չերգեք։

Մենք զարմացանք, որ նա իր սենյակում նստած, համարյա կես կիլոմետր հեռավորության վրա, կարողացել է իմանալ որտե՞ղ ին երգում և ո՞վքեր են երգում։ Մենք չկարողացանք ծածկել մեր հանցանքը ու խոստովանեցինք ճշմարտությունը։

— Ձայնդ սկսվել է մաքրվել և գույնը տեղը գալ,— դառնալով դեպի ինձ ասաց Կոմիտաս վարդապետը և ավելացրեց.

— Պատվիրածներս կատարո՞ւմ ես, այո՞։

— Այո, Հայր սուրբ, կատարում եմ։ Ոչ միայն աղի կծու բաներ չեմ ուտում, այլ վախենում եմ քաղցրն էլ ուտել,— քաշվելով պատասխանեցի ես։

— Հա՛ հա՛ հա՛,— իրեն հատուկ վարակիչ ծիծաղից հետո ավելացրեց.— Ա՛յ շատ ապրես, այդպես էլ կշարունակես, իսկ վաղվանից կսկսես հաճախել խմբի փորձերին։ Հիմա սպասեք, ձեզ խաղողով հյուրասիրեմ։

Այս ասելով, տեղից վեր կացավ, որ տաղավարից խաղողը բերի։ Մենք արագ ոտքի հլանք և շնորհակալություն հայտնեցինք ու ներողություն խնդրեցինք, որ չենք կարող մնալ, որովհետև շուտով «սերտողության դանդը» կտան և մենք կարող ենք ուշանալ, ու «թևեր առած», ուրախացած, հեռացանք։

***

Միջահասակից քիչ բարձր, վայելուչ կազմվածքով, նուրբ դիմագծերով, խարտյաշ աչքերով, խոհուն հայացքով, կլորաձև, ճաղատ գլխով, կարճամազ մուրուսով մի մարդ էր այդ ժամանակ Կոմիտաս վարդապետը։ Խայլում էր ուղիղ կեցվածքով, աշխույժ, առանց այս ու այն կողմ նայելու։ Խոսում էր դգացված տոնով, հակիրճ, թեթև հումորով, թավ, դուրեկան, կրծքի մախմուր ձայնով։

Համապատասխան իր հոգևոր կոչմանը՝ Կոմիտաս վարդապետը դուրսը, պաշտոնական ժամերին, հագնում էր սև սքեմ, գլուխը ծածկում վեղարով, իսկ բնակարանում՝ թեթև, կաթնագույն բեհեզյա սենեկազգեստ, առանց գլխարկի։ Սենեկազգեստի երկու կողմից էլ ուներ ծոցագրպաններ, ուր միշտ կային սրածայր մատիտն ու ծոցատետրը, նշումների և գրառումների համար։

Կոմիտաս վարդապետն ուներ աշխատանքային ռեժիմ։ Ջրոսնում էր օրվա խաղաղ ժամերին, երբ քիչ էր լինում շարժումը դուրսը, կամ վաղ առավոտյան ու երեկոյան խաղաղ ժամերին, միշտ էլ համարյա մենակ։ Ամբողջ 4—5 տարվա ընթացքում ես չեմ հիշում մի դեպք, որ նա ջրոսանքի դուրս եկած լիներ որևէ միաբանի հետ, ինչպես անում էին էջմիածնի մյուս միաբանները։ Ավելի շատ սիրում էր զրուցել ճեմարանի աշակերտների հետ։

Հանդիսավոր կամ կիրակի օրերին, երբ Մայր Տաճարում վերջանում էր արարողությունը և հարյուրավոր մարդիկ գնում էին Ներսիսյան լճի ափին զբոսնելու, որոնց թվում և շատ միաբաններ, նա, ընդհակառակը, իր քայլերն ուղղում էր դեպի բնակարանը շտապողականությամբ։ Նա չէր սիրում խըռնըված հասարակությունը և խուսափում էր նրանից, գերադասելով մենակությունը։

Կոմիտաս վարդապետը վայելում էր ամբողջ ուսանողության սերն ու համակրանքը։ Բոլորը, մեծ թե փոքր, առանձին պատկառանքով էին խոսում նրա մասին։ Այդ բանի պատճառը նրա բարեհիզ բնավորությունն էր, խոհուն ընթացքը, պարզ ու սրտագին վերաբերմունքը դեպի շրջապատը։

***

Էջմիածնի Մայր Տաճարի հյուսիսային բակի արևելքից-արևմուտք ամբողջ երկարությամբ կառուցված էին միաբանների հնադարյան խուցերը, մենարանները։ Այդ մենարաններումն էին ապրում սարկավագները, աբեղաները և վարդապետները։ Մենարանների ետևը հնադարյան, բարձր պարիսպներով պատած վանքի զբոսայգին էր։ Մենարան խուցերի արևմտյան կողմը վերջանում էր բարձր պարսպաբուրգերով։ Այդ մասում դեռ պահպանվում էին հինավուրց վաղարշապատ բերդաքաղաքի արտաքին և ներքին պարիսպները։ Արտաքին բերդապարիսպը վերջանում էր վանքի արտաքին դարբասով, որը բացվում էր քաղաքի կենտրոնական հրապարակի վրա։ Այդ դարբասով մըտնելով արտաքին գավիթը, մոտ հարյուր քայլ գնալով պետք էր անցնել Տրդատա դռնով և ապա մտնել վանքի բակը։ Հյուսիսային կողմից այդու պարիսպները, որոնց վերջն էր արտաքին մեծ դարբասը, հարավից վանական խուցերի շարքը, արևմուտքից Տրդատա դռան պարիսպը, արևելյան կողմից ներքին բերդապարսպից մնացած մի բարձր բուրգ պարփակում էին իրենց մեջ մոտ 250 քառակուսի մետր տարածություն, բոլորովին անտեսանելի դրսի կողմից։ Պարիսպներով պարփակված այդ անտեսանելի բակը, միայն մի նեղ, այն էլ վերնածածկած, մուտք ուներ վանքի բակի կողմից, խուցերի արանքով։ Այդ բակի արևելյան անկյունում կար մի երկհարկանի, պատշգամբով համեստ բնակարան, ծաղկապարտեզով։ Այդտեղ էր ապրում Կոմիտաս վարդապետը։ Միաբաններից ոչ ոք այդպես մեկուսացած առանձնարնակարան

չուներ։ Խրիմյան Հայրիկի հատուկ հոգատարության հետևանքով, Կոմիտաս վարդապետին տրված էին բոլոր հնարավորությունները աշխատելու համար։ Բնակարանն ու պարտեզը չէին երևում գետնի վրայից։ Բարձր պարիսպների ամփոփ գրկում, հեռու էր դրսի աղմուկից և հասարակության հայացքից։

Բնակարանը բաղկացած էր վարի և վերի սենյակներից։ Վարինը ցախատունն էր և սպասավորի կացարանը, իսկ վերևում ապրում ու աշխատում էր ինքը։ Վերևի սենյակը բաղկացած էր ննջարանից ու աշխատանքի սենյակից։ Այստեղ էր դրված ազգային բաներար Մանթաշյանից նվեր ստացած դաշնամուրը։ Սենյակի կահավորությունը համեստ, պարզ ու վերին աստիճանի մաքուր էր։ Պատերից կախված դիմանկարներից հիշում եմ Բեթհովենի, Շոպենի, Չայկովսկու, Բախի, Նկմալյանի, Հ. Թումանյանի, Ա. Արովյանի, Մեսրոպ Մաշտոցի ու Խրիմյան Հայրիկի դիմանկարները։ Գրասեղանի վրա դրված լուսանկարներից հիշում եմ իրեն՝ Կոմիտասի և դերասան Աբելյանի լուսանկարները միասին, Արշակ Ջոպանյանի հետ էլ առանձին՝ նկարված արտասահմանում։ Կային և ուրիշ լուսանկարներ։ Բացի լուսանկարներից, գրասեղանի վրա կար մի ալբոմ, որի մեջ զետեղված էին հայկական զանազան գավառների տիպիկ տարազով կանանց, աղջկանց, տղամարդկանց նկարներ և Գ. Բաշինջաղյանի Անիի ավերակների տեսարաններից բացիկներ։ Գրքերի հատուկ պահարանի փոխարեն, հիշում եմ կարմիր փայտից գրակալը, որի աստիճաններում դարսված էին բավական գրքեր և երաժշտական տետրեր, մատյաններ։ Աշխատանքի սենյակը միաժամանակ ծառայում էր որպես ընդունարան։ Այդտեղ էլ նախաճաշում և թեյում էր հայր Կոմիտասը։

Բակը ներկայացնում էր իրենից արևելյան հնքիաթների մեջ նկարագրված մի չնաշխարհիկ պարտեզ-ծաղկանոց։ Մեջտեղը սրբատաշ քարերով սալահատակած մի ավազան, աղբյուրաջրի շատրվանով, որի մեջ խայտում էին փոքրիկ ձկնիկներ։ Ավազանի չորս բոլորը բազմավեճ, բազմերանգ ծաղիկների թմբիկներ ու մարգեր, իսկ պարտեզի արևմտյան ծայրում՝ երկու նռենի, երկու ծիրանի և մեկ տանձենի ծառեր, Կոմիտասի ձեռքով տնկած։ Հյուսիսային ու հարավային կողմերում վարդաթփերի շարքերն էին, իսկ արևելյան մասում, ուր բնակարանն էր, նրա դիմացը, պարտեզի ծայրում, մանրաթերթիկ, հոտավետ վարդաթփերով շրջապատված մի տաղավար, ուր դրված էր մի փայտե թախտ մաքուր սավանով ծածկած, թախտի վրա մի փոքրիկ գլխաբարձ, դիմացն էլ մի փոքրիկ գրասեղան։ Տարվա տաք եղանակներին Կոմիտաս վարդապետը այստեղ էր անցկացնում օրվա մեծ մասը։ Պարտեզ-ծաղկանոցի կենտրոնական տարածությունը բռնում էին բազմապիսի ծաղիկները. մանուշակը, թրքական վարդը, պարսկական նարգիզը, եգիպտական շուշանը, հնդկական կակաոսը, հայկական մեխակը և այլ ծաղիկներ զարդարում էին պարտեզը և դարձնում այն մի հմայիչ բուրաստան։ Եվ այդ պատահական չէր։ Կոմիտասը սիրում էր ծառ ու ծաղիկները, նրա հոգին ու սիրտը խոսում էին բնության հրաշալիքների հետ. մայրական հոգատարությամբ նա խնամում, դաստիարակում էր ամեն մի ծաղիկ իր պարտեզում։ Ամեն մի ծաղիկ մի հոգի էր նրա համար, ամեն մի ծաղկի մեջ իմաստ էր դնում նա։ Երգ ու ծաղիկ— ահա նրա ստեղծագործության էությունը։

***

Ճեմարանի երկրորդ դասարանումն ենք։ Դասի զանգը տվել են և վերակացու Հ. Գրիգորյանը շտապեցնում է աշակերտներին դասարան գնալու։ Մեր դասարանում եղած ընշտության-երգեցողության դաս է. անհամբեր սպասում ենք դասատուին։ Մտնում է Կոմիտաս վարդապետը, իրեն հատուկ լրջությամբ, աշխույժ քայլերով մոտենում է ամբիոնին և մի պահ հայացք գցելով ուքի եղած դասարանի վրա, մեղմ ձայնով ասում է.

—Նստե՛ք։

Անշշուկ նստում ենք բոլորս։ Կոմիտաս վարդապետը բաց է անում մատյանը ու առանց ստուգում կատարելու կանչում է.

—Տեր Գրիգորյան Սուրեն։ Ի՞նչ ես պատրաստել այսօրվա դասի համար։

— «Մոկաց Միրզին» երգել ձայնանիշներով,— պատասխանում է Սուրենը ոտքի կանգնելով։

— Հապա երգիր։

Սուրենը, որ երաժշտության մեջ ուժեղ աշակերտներից էր, համարձակ ու անսխալ երգում է դասը։

— Շատ ապրես, նստիր,— ասում է նա և գնահատական նշանակում։

Այնուհետև մի երկու հոգու ևս ստուգելուց հետո, անցնում է նոր դասի բացատրության։

— Այժմ ծանոթանանք ժողովրդական երգերի մի այլ տեսակի հետ, որով մեր ժողովուրդը առածական ձևով իրեն ծաղրն է անում խորամանկ շահամոլ մարդկանց հասցեին,— ասում է Կոմիտաս վարդապետը ու կավիճը վերցնելով գրում է գրատախտակի վրա.

«Աղվես գնաց մտավ չրաղաց,
Թաթեր վերուց մի բոլ խաղաց...»։

Նախ կանգ է առնում բառերի շնշոտալության, առոգանության ու արտասանության վրա, երգելով, ինտոնացիայով արտահայտում աղվեսի բնավորության գլխավոր հատկանիշները այնպես ալավորիչ կերպով, որ մենք պատկերացնում ենք աղվեսին ջրաղացում իր բոլոր արարմունքներով։

Մեր դասարանը, որ հայտնի էր Ճեմարանում իր չարաճճիությամբ, շնչապահ լռությամբ ու լարված ուշադրությամբ լսում էր Կոմիտաս վարդապետին։

Մի անգամ էլ դասի ժամանակ Կոմիտասը բացատրում էր հայտնի մարտական երգ «Լո, լո»-յի իմաստը, նրա պատմական ու ազգագրական ծագումը և թե ինչպես, ինչ տեմպով և պաֆոսով պետք է կատարել այդ հերոսական երգը։ Ամբողջ դասարանով այնքան հմայվեցինք նրա ասմունքով, որ միաբերան խնդրեցինք մի բան արտասանել։ Կոմիտասը զիջեց մեր թախանձանքին ու արտասանեց Ալիշանի «Հրազդան» ոտանավորը։ Նրա դուրեկան, թավշյա, կրծքաձայնով և սրտաբուխ առոգանությամբ արտասանած «Հրազդա՛ն, գետա՛կդ իմ հայրենի, Հրազդա՛ն, ջրի՛կդ իմ անուշիկ» բառերը մինչև հիմա էլ հնչում են իմ ականջներում։

Կոմիտասն իր արտասանությամբ այնպես կախարդեց մեր հոգին, ինչպես կարող է հմայել ու կախարդել գեղարվեստական ասմունքի լավագույն վարպետը։

***

Ինչպես հայտնի է, Ճեմարանը դիշերօթիկ բարձրագույն դպրոց էր։ Մոտ երեք հարյուր հոգի ուսանողություն կար այն ժամանակ Ճեմարանում։ Աշխարհի բոլոր կողմերից, ուր հայկական գաղութներ կային, ուղարկում էին տղաներ Էջմիածնում սովորելու։ Սակայն մեծ տոկոսը կազմում էին Արևմտահայաստանից և Ռուսաստանից ու Կովկասից եկած տղաները, գլխավորապես աշխատավոր ընտանիքի երեխաները։

Ճեմարանի տաներն ընդունվում էին մեծ մրցությամբ, որի հետևանքով էլ ավելի ընդունակ երեխաներին էր հաջողվում ընդունվել Ճեմարան. իսկ կեթ քննությունն հանձնողը լավ ձայն ուներ, նրա վերաբերյալ անում էին որոշ դիջումներ։

Այս հանգամանքը նպաստում էր Ճեմարանում ձայնեղ աշակերտների թվի աճին։ Ուստի զարմանալի չէ, որ 70—80 հոգուց բաղկացած բազմաձայն երգեցիկ խումբը միայն տղաներից լինելով, ուներ սոպրանո (դիսկանդ), ալտ՝ առաջին և երկրորդ, տենոր՝ առաջին և երկրորդ, բարիտոն և բաս՝ առաջին և երկրորդ։ Տարիքային տեսակետից Ճեմարանում սովորում էին 8—9 տարեկան երեխաներից մինչև 20—22 տարեկան երիտասարդներ (լսարաններում)։ Այն ժամանակ Ճեմարանն ուներ վուգընթաց դասարան, որը համարվում էր նախապատրաստական՝ առաջին դասարանը փոխադրվելու համար։ Այդ և առաջին դասարանի աշակերտներից էլ երգում էին խմբի մեջ որպես առաջին ձայն դիսկանտներ և ալտեր։ Այնուհետև՝ մինչև 8 դասարան, որից հետո էլ երեք լսարաններ՝ բարձրագույնի ծրագրով։ Այսպիսով Ճեմարանը ավարտելու համար պատգնթաց դասարանից մինչև 8 լսարանը, պետք էր առանց դասարանում մնալու, ամեն տարի փոխադրվելով, սովորել 10 տարի։ Ուրեմն երգիչ ուսանողը այդքան ժամանակ մասնակցում էր թե՛ քառաձայն խմբին և թե՛ հոգևոր երաժշտությանը Մայր Տաճարում։

Երգեցիկ խմբի պարապմունքները տեղի ունեին շաբաթը երկու անգամ, Ճեմարանի հանդիսարանում, Կոմիտաս վարդապետի ղեկավարությամբ։ Երգիչներս առանձին հաճույքով էինք հաճախում պարապմունքներին, որովհետև ոչ միայն սովորում էինք երգելու արվեստը, այլև մեծ բավականություն էինք ստանում։

Բացատրում էր անցնելիք երգի բովանդակությունը, բառերի արտասանման եղանակը, որ գավառի բարբառ լինելը, որ դարաշրջանին պատկանելը, կենցաղի որ կողմին վերաբերվելը և հետո սկսում էր մելոդիայի ուսուցումը։ Հաճախ երգի մելոդիան կամ մայր եղանակը ինքն էր նվագում և կատարում՝ նախքան սովորեցնելը։ Երգում էր զգացված, թավ, կրծքի ձայնով, որի ծավալը երկու և կես octavից ավելի էր։ Վարդապետներից մեկը, որը հայտնի էր էջմիածնում իր կատակաբանությամբ, նրան անվանել էր «ձայների շտեմարան»։

Կոմիտաս վարդապետը պարապմունքների ժամանակ շատ լուրջ և խստապահանջ էր։ Բայց երբ նկատում էր հոգնածություն խմբի մեջ, մի հաճելի կատակով ծիծաղացնում էր բոլորիս և վրկին թարմացնում խմբի տրամադրությունը։

Ամենից զարմանալին նրա լսողությունն էր և շափ տալը երգի կատարման ժամանակ։ Ութսուն հոգի միաժամանակ երգելիս մի փոքրիկ սխալն անգամ չէր վրիպում նրա լսողությունից. անմիջապես դադարեցնում էր երգը և մատով ցույց տալիս երգողին, որը կես, նույնիսկ մի քառորդ տոնիճանցածր կամ բարձր էր վերցրել նոտան։ «Ա՛յ դո՛ւ, զուռնաչի՛» ասելով, նորից կրկնել էր տալիս երգը։ Շափ տալիս լարվում էր ամ-

բոլոջ մարմնով և հոգով։ Այնպիսի երգեր, ինչպիսիք են «Ո լո»-ն, «Գութանի երգը» և այլն, ուր կան արագ և դանդաղ չափեր, միաժամանակ բասերին, տենորներին, ալտերին, դիսկանտներին առանձին-առանձին նշան էր անում ձեռքերով, գլխի շարժումով և հայացքով։ Օրինակ՝ ալ ձեռքով տալիս էր կես բախում, ձախով մեկ ութերորդական, գլխի թեթև շարժումով մեկ ամբողջական և այլն, մանավանդ այն դեպքերում, երբ երգը կատարվում էր ոչ թե քառաձայն, այլ ութաձայն, մինչև իսկ տասներկու ձայնով։ Այդպիսի բարդ ներդաշնակության հասնելը ամենահմուտ խմբավարներին էլ դժվարությամբ է հաջողվում։

Խումբը ելույթներ էր ունենում բոլոր հանդիսավոր առնակատարություններ ժամանակ Ճեմարանի համերգների դահլիճում և մեծ տոների ժամանակ Մայր Տաճարում։

Առանձին շքով ու ոգևորությամբ էր կատարվում Ճեմարանում Վարդանանց Տոնը և Ճեմարանի տարեդարձը, որոնց ներկա լինելու համար գալիս էին բազմաթիվ հյուրեր Թիֆլիսից, Երևանից և այլ քաղաքներից։

Այդ տոնահանդեսների զարդն էր Կոմիտաս վարդապետը իր երգեցիկ խմբով։

***

Աշնան օրերն էին։ Թիֆլիսի համա-ազգրկովկասյան երգեցիկ խմբերի առաջնահերթ փառավոր հաղթանակ տանելուց հետո Կոմիտաս վարդապետի խմբի անունը հռչակվել էր ամենուրեք։ Երևանից և Բաքվից նա հրավեր առացավ համերգ տալու։

Երևանի այն ժամանակվա լավագույն թատերասրահը այժմվա «Սպայի տան» թատրոնն էր, որը պատկանում էր Ջամիրոյադյաններին։ Համերգից երկու օր առաջ բոլոր տոմսերը վաճառված էին։ Թատրոնի դահլիճը, պատշգամբը, միջանցքները լիքն էին ունկնդիրներով։ Համերգն սկսելուց երկու ժամ առաջ էջմիածնից մեր խումբը հասել էր Երևան և Կոմիտաս վարդապետի խիստ կարգադրության համաձայն, մենք հանգրստանում էինք բեմի հետևի սենյակներում։ Կարգադրված էր սաղը ջուր չխմել, հաց ու պանիր, մրգեղեն, քաղցրեղեն չուտել համերգից առաջ, այլ խմել մի-մի բաժակ եփած, բայց զովացած կաթ, միջը լցրած մի քանի կաթիլ կոնյակ։ Երեկոյան ժամը 8-ին վարագույրը բացվեց և Երևանի հասարակությունը բեմի վրա տեսավ 90 հոգուց բաղկացած Ճեմարանի երգեցիկ խումբը՝ Կոմիտաս վարդապետի ղեկավորությամբ։

Առաջին համարը երգեցինք «Գարուն ա ձուն ա արել». մնացածների հերթականությունը լավ չեմ հիշում, բայց միտս է, որ երգեցինք «Մոնա յար», «Շողեր ջան» «Կալի կրգը», «Ալագյազ սարն ամպել ա», «Խումար պառվեն», «Գնա, գնա գալիս եմ», «Կուժն առա, եկա տարը», «Իմ չինարի յարը», իսկ վերջը՝ «Ո լո»-ն։

Ամեն մի համարից հետո դահլիճը թրթռում էր ծափահարություններից։ Իսկ «Ո լո»-յից հետո ծափերի աղմուկի փոթորիկ բարձրացավ դահլիճում, որ տևեցավ եղանք երկրորդ, երրորդ անգամ կրկնել։ Համերգից հետո Կոմիտաս վարդապետը կարգադրեց չցրվել և մի քանի րոպե մնալ, որպեսզի կոկորդները, ձայնալարերը հանգրստանան և դրսի սառը օդից չվատանգվեն։

Սակայն դահլիճը շարունակում էր թնդալ ու լսվում էին բացականչություններ։ Մի երկու րոպե չանցած, երեք հոգի, հանձնաժողովի նախագահի գլխավորությամբ, մտան բեմ և պատկառանքով մոտենալով Կոմիտասին, ասացին հետևյալը.

— Ամբողջ հասարակությունը խնդարհարար խնդրում է հայր Կոմիտաս վարդապետից երգել մի երգ։

Երկար թախանձանքից հետո, Կոմիտասը ավեց իր համաձայնությունը։

Վարագույրը քաշեցին, բեմը բացվեց։ Ամբողջ թատրոնը շնչատահ ուշադրությամբ հետևում էր Կոմիտասի շարժումներին։ Նա մոտեցավ դաշնամուրին, նստեց աթոռի վրա և ձեռքերը դրեց ստեղների վրա ու մի պահ սիրից հանդիսավոր լռություն... Այդ մի վայրկյան էր, երբ բոլորս էլ կախարդվել էինք այդ մեծ մարդու հմայքով։

Ահա հնչեցին գմայլիչ ակկորդները և Կոմիտաս վարդապետն սկսեց «Անուշն»-ը։ Ինչպիսի՜ թավշային փափկություն ձայնի, ինչպիսի՜ խորություն ապրումների, ինչպիսի՜ դրսևորում վշտի, կարոտի ու տենչանքի... Մինչև վերջին «Տո լաճ, տնավեր»-ը, էլեկտրականացել էր բեմն ու դահլիճը...

Վարագույրն իջել, Կոմիտաս վարդապետն ու խումբը գնացել էին արդեն բեմից, իսկ դահլիճում դեռ շարունակում էր ծափերի որոտը։

(Շարունակելի)